

PEARLS OF ARMENIAN HERITAGE

Ազաթանգեղոս (Հինգերորդ Դար)

Հայաստանի լուսաւորութեան ամէնէն սկզբնական արձանագրութիւնը կը պարունակէ այս հաւաքածոն: Բազմազան աղբիւրներէ կը քաղէ իր նիւթը, մէկտեղ բերելով պատմական տեղեկութիւններ, վկայաբանական յիշատակներ, եւ քրիստոնէական վարդապետութեան քարոզութիւններ:

Հեղինակութեան անունն ալ աւելի խորհրդանշական իմաստ ունի քան իրական անձի մը՝ “Բարի Լուր բերող պատգամաւոր”–նման՝ այս գիրքին շարունակութիւնը եղող “Ճշմարիտ քաջութեան գործեր (բիզանդարան)” հաւաքածոյին, որ ծանօթ է *Փաւստոս Բիզանդացի* ենթադրեալ անձէ մը գրուած մեզի հասած “Պատմութիւն” գիրքով:

Բազմազան հեղինակներու գործերէ հաւաքուած աշխատութիւն մը ըլլալը յայտնի է լեզուին եւ ոճին անհասարկութիւններէն: Տայտուն կերպով յայտնի են հեղինակներուն տարբեր նկարագիրները, ոմանք հզօր երեւակայութեամբ, ուրիշներ տիրապետող կիրքով, դարձեալ ոմանք յորդառատ թափով, եւ ուրիշ մը շքեղ եւ վեհ գնացքով:

Լեզուն եւ ոճը կ’արտայայտեն այս հեղինակներուն այլազանութիւնը, բոցավառ գոյներու երփնապնակով, հոմանիշներու եւ բարդութիւններու առատութեամբ, իմաստները խտացնելու եւ զգացումները կենդանի դարձնելու տարբեր մօտեցումներով. ընթերցողը կ’ալեկոծի Հայաստանի լուսաւորութեան զգլխիչ պտոյտէն, ուր կենսունակ կերպով կը ներկայանան դէպքերը, եւ աւելի կը հիանայ ի տես տեղի ունեցած իրադարձութիւններուն շլացուցիչ փայլատակումներուն քան կը հասկնայ զանոնք:

Այս խմբագրուած գործին մէջ ամփոփուած են 1) Գրիգորի վարքը՝ տեղադրուած հայոց պատմութեան մէջ, 2) Գրիգորի վկայաբանութիւնը, 3) Հռիփսիմեան կոյսերուն վկայաբանութիւնը, 4) Գրիգորի Վարդապետութիւնը, 5) Գրիգորի Կտակը–կամ՝ Տեսիլը:

Դարերու ընթացքին այս հաւաքածոն պահած է իր մագնիսական գրաւչութիւնը, եւ իր վրայ շարունակած է հաւաքել ու հիւսել նոր բարեպաշտ պատմութիւններ, ինչպէս Գրիգոր Լուսաւորչին եւ Տրդատ թագաւորին Հոռմ այցելութիւնը, եւ ասոր վրայ ազուցուած *Դաշանց թուղթ* կոչուած գրուածք մը:

Բնագիր աղբիւրները եղած են հայերէն, ասորերէն, յունարէն եւ լատիներէն, փոխադարձ թարգմանութիւններով: 1902-ին Նիկողայոս Մառ բանասէր-պատմագէտը գտաւ նոյնիսկ յունարէնէ արաբերէնի թարգմանուած Գրիգոր Լուսաւորչին կենսագրութիւն մը, որ տարբերութիւններ ունի Ազաթանգեղոսի ներկայ հայերէն հաւաքածոյին տեղեկութիւններէն:

(Քաղուած Հ. Կիրեղ Վրդ. Քիպարեանի “Պատմութիւն Հայ Գրականութեան” հատորէն)

